

Հաստատված է  
ԵՊՀ գիտական խորհրդի  
2017 թ. մարտի 30-ի թիվ 6 նիստում

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ  
Ա. Հ. Սիմոնյան

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

### ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) ֆակուլտետի մեթոդական խորհրդի իրավասությունը, ձևավորման և աշխատանքի կազմակերպման կարգը:

2. ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհուրդը ֆակուլտետի դեկանին կից խորհրդակցական մարմին է, որի գործունեության նպատակն է նպաստել ֆակուլտետում տարվող ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքների պատշաճ իրականացմանը:

3. Ֆակուլտետի մեթոդական խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է ԵՊՀ կանոնադրությանը, ԵՊՀ ֆակուլտետի կանոնադրությանը, ԵՊՀ ներքին իրավական ակտերին և սույն կանոնակարգին համապատասխան:

#### 2. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի խնդիրներն են՝

1) կրթական ծրագրերի ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի արդիականացումն ու համապատասխանեցումը աշխատաշուկայի պահանջներին,

2) ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու դասավանդման մեթոդներին առնչվող հարցերի քննարկումը,

3) գիտելիքների ստուգման և գնահատման կիրառվող մոտեցումների քննարկումը,

4) պրակտիկաների արդյունավետության բարձրացման մեխանիզմների մշակումը և մշտադիտարկումը,

5) ուսումնամեթոդական աշխատանքների երաշխավորումը,

6) դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների և ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների արդյունքների քննարկումը,

7) ԵՊՀ ներքին իրավական ակտերով սահմանված և ԵՊՀ հիմնական գործունեության հետ կապված այլ խնդիրների իրականացումը:

### **3. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ**

5. Ֆակուլտետի մեթոդական խորհուրդը ձևավորվում է՝ ֆակուլտետի յուրաքանչյուր ամբիոնից ընդգրկելով պրոֆեսորադասախոսական կազմի մեկական ներկայացուցիչ: Մեթոդական խորհրդի անդամների անվանական կազմը հաստատվում է ֆակուլտետի դեկանի կողմից՝ երեք տարի ժամկետով:

6. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահ նշանակում է դեկանը՝ մեթոդական խորհրդի անդամներից:

7. Ֆակուլտետի մեթոդական խորհուրդը հարցերը քննարկում է դեկանի առաջարկով, ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ կամ սեփական նախաձեռնությամբ: Հարցերը քննարկվում են նիստերում, որոնք անցկացվում են աշխատանքային ծրագրին համապատասխան կամ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

8. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նիստերը նախագահի հանձնարարությամբ արձանագրվում են խորհրդի անդամներից մեկի կողմից: Նիստերն իրավազոր են խորհրդի անդամների երկու երրորդի ներկայության դեպքում:

9. Ֆակուլտետի մեթոդական խորհուրդն իր առաջարկությունները կամ եզրակացությունները ներկայացնում է ֆակուլտետի դեկանին կամ ֆակուլտետի գիտական խորհրդին:

10. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի կողմից կազմված փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք:

### **4. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

11. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է ԵՊՀ կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

12. Սույն կանոնակարգի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով: